ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/74

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝«Հարությունյան Շին» ՍՊԸ

Բողոքարկման ընթացակարգի կողմեր՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Մուրադյանի, Գ. Ոստանիկյանի

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է. Չատինյանի

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Մ. Սահակյանի

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ՝ Լ. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 16.10.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝

- դադարեցնել թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ.-ի հոկտեմբերի 3-ի թիվ 4 ոձանագրության 3-րդ կետով կայացված որոշումը:

- պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմենջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը բավարար գնահատելու և վերջիններիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.10.2019թ.-ին և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ: 22.10.2019թ.-ին և 30.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքաբերի 21.10.2019թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 22.10.2019թ.-ի գրությամբ՝ սույն բողոքարկման ընթացակարգում որպես կողմեր են ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

Բողոքի քննությունն ավարտվել է 30.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.11.2019թ.-ին:

2. <u>«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ն 16.10.2019թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից («Երևանի քաղաքապետարան»-ի կարիքների համար՝ «Կենցաղային թափոնների կոնտեյներների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել

ա/ «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն և «ԿՈՆՏԵՅՆԵՐ ՊՈԼՍԿՈ» ՍՊԸ-ն /Կոնսորցիում/

բ/ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն և «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան /Կոնսորցիում/

գ/ «ԱՐՄ ՊԼԱՍՏ» ՓԲԸ-ն

2019թ. սեպտեմբերի 6-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 2 արձանագրությունը, որով հաստատել է, որ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում առկա չեն թվաբանական անճշտություններ:

Նույն արձանագրությունը 3,2 կետով որոշվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

2019թ. սեպտեմբերի 6-ի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 3,3-րդ կետով որոշվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյանին /Կոնսորցիում/

2019թ. սեպտեմբերի 20-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 3 արձանագրությունը, որի 3-րդ կետում նշել է՝ Հիմք ընդունելով կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 46-րդ կետը, ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ կոնսորցիումի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում և նշված պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ, որպես կողմ նշված է ռուսերեն լեզվով («МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия») Сербия և անգլերեն լեզվով («MNG Plastik-

Gogic DOO INDJIJA» Serbia), այնինչ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում կոնսորցիումի մասնակից նշված է «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունը:

Կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված 05.09.2019թ. կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագրում և նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության անունից ստորագրությունը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիչի կողմից, իսկ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիկի կողմից:

ISO 9000:2015 SPRS ISO 9000:2015 և ISO 14001:2015 SPRS ISO 14001:2015 սերտիֆիկատները տրվել են («MNG Plastik-Gogic DOO INDJIJA ընկերությանը, իսկ TUV Rheinland կողմից տրված 0001 և 0002 սերտիֆիկատները տրվել են «MNG Plastik-Gogic Doo Kralja Petra I bb 22320 INDIJA Serbia ընկերությանը:

2019թ. սեպտեմբերի 20-ին գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության 4-րդ կետով որոշել է ծանուցել կոնսորցիումին 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

2019թ. հոկտեմբերի 3-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 4 արձանագրությունը, որի 3-րդ կետով որոշել է՝ Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով կոնսորցիումի կողմից տրամադրված փաստաթղթերը արձանագրում է հետևյալը՝

«МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» /«ԷՄԷՆՋԻ Փլաստիգ Գոգիկ» ԴՕՕ ինջիյա/ ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է տեղեկանք, որով մեկնաբանվել է, որ անհամապատասխանությունը կապված է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Սակայն անհամապատասխանությունները կապված են նաև ընկերության անվանման անգլերեն, սերբերեն և ռուսերեն լեզուներով տարբերակների միջև: Բացի այդ հայտում ներառված հայերեն փաստաթղթերում /հավելված 3.կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագիր/ կոնսորցիումի մասնակցի անվանման բաղադրիչը նշվել է «ինդիյա» և գնահատող հանձնաժողովի համոզմամբ այն առանց ուղղագրական կամ արտասանական խնդիրների նույն արտասանությամբ կարող է գրվել նաև ռուսերեն, մինչդեռ ներկայացված տեղեկանքում ընկերության անվանումը նշվել

է Инджия /Ինջիյա/: Ընդ որում այդպիսի արտասանության ճիտ լինելու դեպքում գրառումը հայերենով կատարելը նույնպես հնարավոր էր և խնդիր չէր առաջացնում:

Ներկայացվել է «Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք, ըստ որի «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019թ. թիվ 3 արձանագրությունը, համաձայնվել է փոփոխել և խմբագրել «Սերբին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիգ Գոգիկ» ԴՕՕ ինջիյա ընկերության միջև 10.02.2019թ. կազմված հանձնման-ընդունման ակտը՝ «ԷՄԷՆՋԻ Փլաստիգ Գոգիկ» ԴՕՕ ինջիյա ընկերության տնօրեն «Սլոբոդան Գոգիկ»-ին փոխարինելով «Սլոբոդան Գոգիչ»ով և ներկայացվել է խմբագրված ակտ: Հատկանշանական է, որ ըստ տեղեկանքի՝ հիմքում ունենալով ընթացակարգի հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունների արձանագրությունը, շտկվել է միայն ընկերության տնօրենի անուն ազգանունը և չի շտկվել ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկը»-ը /Гочик/, թեև առկա էր դրա շտկման իրական հնարավորություն՝ հաշվի առնելով ընկերության տնօրենի ազգանվան փոփոխությունը: Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը գտնում է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով հրավերի 8,18 կետի 2-րդ ենթակետը ու ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Հարությունյան Շին» ՍՊ և «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունների /Կոնսորցիում/ հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊ և «ԿՈՆՏԵՅՆԵՐ ՊՈԼՍԿՈ» ՍՊ ընկերություններին /Կոնսորցիում/-ին:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի ....) որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները ... որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Հիմք ընդունելով վերը նշված նորմերը ներկայացնում եմ սույն բողոքը, քանի որ գտնում եմ, որ Գնահատող հանձնաժողովի անօրինական որոշմամբ ոտնահարվել է

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյան Կոնսորցիումի իրավունքները:

2019թ. սեպտեմբերի 20-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 3 արձանագրությունը, որի 3-րդ կետով նշել է թվով 3 փաստ, այն է՝

Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում և նշված պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ, որպես կողմ նշված է ռուսերեն լեզվով («МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия») Сербия և անգլերեն լեզվով («MNG Plastik-Gogic DOO INDJIJA» Serbia), այնինչ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում կոնսորցիումի մասնակից նշված է «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունը:

Կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված 05.09.2019թ. կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագրում և նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության անունից ստորագրությունը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիչի կողմից, իսկ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիկի կողմից:

ISO 9000:2015 SPRS ISO 9000:2015 և ISO 14001:2015 SPRS ISO 14001:2015 սերտիֆիկատները տրվել են («MNG Plastik-Gogic DOO INDJIJA ընկերությանը, իսկ TUV Rheinland կողմից տրված 0001 և 0002 սերտիֆիկատները տրվել են «MNG Plastik-Gogic Doo Kralja Petra I bb 22320 INDIJA Serbia ընկերությանը:

2019թ. սեպտեմբերի 20-ին գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության 4-րդ կետով որոշել է ծանուցել կոնսորցիումին 3 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կոնսորցիումի կողմից օրենքով սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության տնօրենի կողմից տրված 24.09.2019թ. տեղեկանքը և «Սերբին» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված 24.09.2019թ. տեղեկանքը:

«ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության տնօրենի կողմից տրված 24.09.2019թ. տեղեկանքում նշվել է, որ ISO և TUV Rheinland կողմից տրված սերտիֆիկատներում նշված Kralja Petra I bb 22320 INDIJA Serbia արտահայտությունը դա «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության իրավաբանական հասցեն է: Նույն

տեղեկանքում նշվել է նաև, որ համապատասխան փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները կապված են ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Ավելին, տեղեկանքում նշվել է նաև, որ «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия») «MNG Plastik-Gogic DOO INDJIJA» և «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունները նույն ընկերությունն է, ինչը հավաստվում է հարկային կոդով՝ 101612478: Նշվել է նաև, որ բոլոր սերտիֆիկատները իրական են, իսկ ապրանքը համապատասխանում է միջազգային ստանդարտներին և չափանիշներին:

«Սերբին» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված 24.09.2019թ. տեղեկանքում նշվել է, որ «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում կատարվել է 28.12.2018թ. թիվ 3 պայմանագրով և 10.02.2019թ. հանձնման-ընդունման ակտով նախատեսված պարտավորությունները: Նշվել է նաև, որ համապատասխան փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները կապված են ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Ավելին «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019թ. թիվ 3 արձանագրությունը, համաձայնվել է նաև փոփոխել և խմբագրել 10.02.2019թ. կազմված հանձնման-ընդունման ակտը՝ «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության տնօրեն «Սլոբոդան Գոգիկ»-ին փոխարինելով «Սլոբոդան Գոգիչ»ով: Նշվել է նաև, որ բոլոր սերտիֆիկատները իրական են, իսկ ապրանքը համապատասխանում է միջազգային ստանդարտներին և չափանիշներին:

Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 –Ն որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետի՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (համաձայնագրերի, պայմանագրերի) պատճենները, իսկ դրանց պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած, պայմանագրի (համաձայնագրի)՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի՝ Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում

պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Տվյալ դեպքում ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 –Ն որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից հետևում է, որ նախկինում կատարած պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար պետք է ներկայացվի կամ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Համաձայն Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով

Վերը նշված հոդվածից հետևում է, որ քանզի ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526–Ն որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի թվարկումը կատարված է «կամ» շաղկապի միջոցով ուստի նշանակում է, որ նախկինում կատարած պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար բավական է միայն թվարկված պայմաններից մեկի առկայությունը:

Այս համոզմունքի համար հիմք է հանդիսանում նաև Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա չի կարող կիրառվել «կամ» շաղկապը:

Այսինքն, ստացվում է, որ նախկինում կատարած պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը լրիվ բավարար է գնահատող հանձնաժողովի համար:

Նշված իրավական վերլուծության և սույն գործի փաստերի համադրումից հետևում է, որ կոնսորցիումը ներկայացրել է «Սերբին» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված 24.09.2019թ. տեղեկանքը՝ գրավոր հավաստումը, ըստ որի՝ «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետներում կատարվել է 28.12.2018թ. թիվ 3 պայմանագրով և 10.02.2019թ. հանձնման-ընդունման ակտով նախատեսված պարտավորությունները, որը լրիվ բավարար է նախկինում կատարած պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Գնահատող հանձանաժողովը անտեսել է ինչպես ՀՀ կատավարության թիվ 526-Ն որոշման 61-րդ կետի պահանջը, այնպես էլ

«Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված գրավոր հավաստումը՝ տեղեկանքը:

Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ 2019թ. հոկտեմբերի 3-ին գնահատող հանձնաժողովը կազմել է թիվ 4 արձանագրությունը, որի 3-րդ կետով անընդմեջ փորձել է պատճառաբանել, որ «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության անվանումը, թե հայերենով, թե ռուսերենով և թե անգլերենով տարբեր է նշված:

Այս պատճառաբանությունը նշելիս գնահատող հանձաժողովը հաշվի չի առել «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության տնօրենի կողմից տրված 24.09.2019թ. տեղեկանքը, որում Ընկերության տնօրենը հստակ նշել է, որ «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия») «MNG Plastik-Gogic DOO INDJIJA» և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունները նույն ընկերությունն է, ինչը հավաստվում է հարկային կոդով՝ 101612478:

Կարծում եմ գնահատողի հանձնաժողովի համար պարզ է, որ յուրաքանչյուր Ընկերության տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար, որը հանդիսանում է այդ ընկերության նույնականացման կոդը:

Ընդ որում էական է այն հանգամանքը, որ ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի: Այլ կերպ ասած գնահատող հանձնաժողովը ընդամենը պարտավոր էր համեմատել «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия») «MNG Plastik-Gogic DOO INDJIJA» և «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունների հարկային կոդերը, որից հետո հանգեր անվերապահ եզրակացության, որ առկա չէ որևէ խախտում: Եթե նույնիսկ գնահատող հանձնաժողովը ինքնուրույն չէր նկատել հարկային կոդերի նույնությունը, ապա այդ մասին «ԷՄԷՆՋԻ Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության տնօրենը տեղեկանքով հուշել էր վերջինիս:

Ավելին, գնահատող հանձնաժողովը պետք է զգոն լիներ այն աստիճանի, որ նկատեր, որ ինչպես «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», «MNG Plastik-Gogic DOO INDJIJA» այնպես էլ «ԷՄԷՆՋԻ Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունների կնքիները նույն են, հետևաբար չի կարող լինել 2-րդ կարծիք, որ այդ ընկերությունները տարբեր են:

Այստեղ չեմ կարող չնշել, թե գնահատող հանձնաժողովի անդամներից այդ որ մեկն էր որակավորված թարգմանիչ, որ կարողացավ ճշտությամբ սերբերենից հայերեն թարգմանություն իրականացնել ու դա դեռ քիչ է մասնակիցներից էլ պահանջել իրականացնել անսխալ թարգմանություն:

Արդարության համար ասեմ, որ Կոնսորցիումը ոչ թե վրիպում է թույլ տվել, այլ անհամապատասխանությունը առաջացել է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետևանքով:

Ավելին, անգամ եթե վրիպում լիներ, ապա դա նույնպես չէր կարող հանգեցնել հայտի մերժմանը, քանի որ վրիպում կարող է թույլ տալ ցանկացած ոք, այդ թվում նաև գնահատող հանձնաժողովը: Ու եթե ուշադիր նայենք գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, կտեսնենք, որ գնահատող հանձնաժողովը արձանագրության մեջ սխալ է նշել մրցույթի ծածկագիրը, մասնավորապես՝ թիվ 2 արձանագրության 1.2 կետում ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1 ծածկագրի փոխարեն նշել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/10 ծածկագիրը, սակայն իրավաչափորեն գտնում ենք, որ այդ վրիպումը ձևական է, ինչպես ձևական էր նաև թարգմանության հետևանքով Ընկերության անվանման մեջ առկա անհամապատասխանությունները:

ՀՀ Սահմանադրական դատարանը կարևորելով ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքը 2013թ. թիվ ՍԴՈ 1119 որոշման մեջ նշել է՝ … սահմանադրական դատարանը գտնում է, որ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության …. իրավունքների իրացմանն օրենսդրորեն կարող են առաջադրվել որոշակի պահանջներ կամ նշված իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

Անկախ այն հանգամանքից, թե ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ 1119 որոշման մեջ ո՞ր հոդվածի սահմանադրականության հարցն է քննարկել, էական է այն

հանգամանքը, որ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ իրավունքների իրացման կարգերը կարող են պարունակել որոշակի ձևական պայմաններ, որոնք, սակայն, չպետք է լինեն այն ծավալով, որ անարդյունավետ դարձնեն այդ իրավունքների իրացումը, խեղաթյուրեն դրանց էությունը կամ վերածվեն իրավունքի այնպիսի սահմանափակման, որը չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

Տվյալ դեպքում սույն գործով կոնսորցիումի որակավորման փաստաթղթերը հրավերի պահանջներին անհամապատասխան ճանաչելու հիմքը եղել է ակնհայտ ձևական, խեղաթյուրել է ամբողջ գնման գործընթացը, սահմանափակել կոնսորցիումի գնման գործընթացին մասնակցելու և ընտրված մասնակից ճանաչելու իրավունքը, որը չի հետապնդել որևէ իրավաչափ նպատակ:

Ավելին, այդ ձևական պահանջների չարաշահման արդյունքում գնահատող հանձնաժողովը որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել է ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին, այսինքն, ստացվում է, որ պատվիրատուն իր համար ոչ շահավետ պայմաններով գնում է իրականացրել, որը ոչ միայն վնաս է պատճառում կոնսորցիումին, այլ նաև Հայաստանի Հանրապետությանը, քանի որ պատվիրատուն գնում կատարելու համար ավելի բարձ արժեք է վճարում, այնինչ նույն գնումը կարող էր կատարել ավելի մատչելի գնով:

Նշվածը փորձեմ առավել պարզ ներկայացնել՝

Գնումը դա իրենից ներկայացնում է տնտեսական գործարք, որի դեպքում մի կողմը հանդես է գալիս որպես գնորդ, իսկ մյուս կողմը՝ վաճառող: Ստացվում է, որ ապրանք ծեռք բերողը նախընտրում է ավելի բարձ արժեք վճարել նույն ապրանքի համար՝ միայն այն պատճառաբանությամբ, որ ինչ-որ տառ սխալ է գրված՝ անտեսելով այն հանգամանքը, որ այդ տառը սխալ գրելու բացատրությունը վաճառողը օրենքի սահմաններում տվել է և տվել է նաև գրավոր հավաստում, որ նախկինում նմանատիպ աշխատանքները պատշաճ կարգով կատարվել են: Եկեք մի պահ պատկերացրեք, որ գնորդը ոչ թե պետական մարմինն է, այլ սովորական ՀՀ քաղաքացին, արդյո՞ք ՀՀ քաղաքացին իր գրպանին կվնասեր և առանց հիմնավոր պատճառաբանության, բարձ արժեք կվճարեր նույն ապրանքի համար, որը կարող էր գնել ավելի ցածր գնով, իհարկե ՈՉ, նույն պատճառաբանությամբ և տրամաբանությամբ էլ պետական մարմինն է պարտավոր չխախտել օրենք և չվնասել ՀՀ պետական բյուջեին:

Ամփոփելով վերոգրյալը և հուսալով, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, ով շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից, ինչպես նաև ևս մեկ անգամ պնդելով բողոքում նշված իրավական և փաստական հիմնավորումները:»:

- Ելնելով վերոգրյալից, «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ դադարեցնել թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ.-ի հոկտեմբերի 3-ի թիվ 4 ոձանագրության 3-րդ կետով կայացված որոշումը:

- պարտավորեցնել պատվիրատուին ընդունել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմենջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը բավարար գնահատելու և վերջիններիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.10.2019թ.-ի գրությամբ դիմել Հերևանի քաղաքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 16.10.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայացնելով գնման ընթացակարգի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուի ներկայացուցիչները ներկայանալով նիստին հաստատել են «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019թ.-ի թիվ 3 և 03.10.2019թ.-ին թիվ 4 արձանագրություններով արձանագրված դիրքորոշումը:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմեր՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքաբերի 21.10.2019թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 22.10.2019թ.ի գրությամբ՝ սույն բողոքարկման ընթացակարգում որպես կողմեր են ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչը հայտնել է, որ շտկման հնարավորություն տալու ժամանակ, որոշակիության սկզբունքը ապահովելու նպատակով, անհրաժեշտ է հստակ նշել, թե ի՞նչ է անհրաժեշտ շտկել:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչը հայտնել է, որ հաշվի առնելով լեզվական առանձնահատկությունները, պետք է հաշվի առնել կազմակերպության հարկային կոդը՝ հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև այն որ Բողոքաբերի կողմից Պատվիրատուին է ներկայացվել կողմի գրավոր հավաստումը պայմանագրում առկա անհստակությունների վերաբերյալ, որով կարելի է նույնացնել կազմակերպությունը:

5. <u>ԳԲՔԱ-LO-2019/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 22.08.2019թ.-ին հայտարարվել է թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն և «Էմէնջի Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա կազմակերպությունը (համատեղ գործունեության պայմանագիր):

Բողոքաբերը «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշել է, որ «Էմէնջի Փլաստիք Գոգիչ» ԴՕՕ

ինդիյա կազմակերպությունը հանդիսանում է Սերբիայի Հանրապետության ռեզիդենտ և վերջինս հարկ վճարողի հաշվեհամարն է՝ 101612478:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 06.09.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Բողոքաբերը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովի 20.09.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526 որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 46-րդ կետը, Հանձնաժողովը արձանագրել է, որ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

1. Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում և նշված պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման մեջ, որպես կողմ նշված է՝ ռուսերեն լեզվով («МНГ Пластик-Гогик Д.0.0 Инджия») Сербия և անգլերեն լեզվով («MNG PLASTIK-GOGIC DOO INDJIJA» Serbia), այնինչ կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում կոնսորցիումի մասնակից նշված է «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությունը:

2. Կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված 05.09.2019 թվականի կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագրում և նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության անունից ստորագրությունը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիչի կողմից, իսկ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը վավերացվել է տնօրեն Սլոբոդան Գոգիկի:

3. ISO 9001:2015 SPRS ISO 9001:2015 և ISO 14001:2015 SPRS ISO 14001:2015 սերտիֆիկատները տրվել են («MNG Plastik-Goglc doo Indjjja» ընկերությանը, իսկ TOv Rheinland կողմից տրված 0001 և 0002 սերտիֆիկատները տրվել են «MNG Plastik-Goglc doo Kralja Petra I bb 22320 Indija Serbia ընկերությանը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով, առաջարկել է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝

առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 03.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի կողմից տրամադրված փաստաթղթերը, արձանագրել է հետևյալը.

1) «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» («Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ ինջիյա) ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է տեղեկանք. որով մեկնաբանվել է, որ անհամապատասխանությունը կապված է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Սակայն անհամապատասխանություններ առկա են նաև ընկերության անվանման՝ անգլերեն, սերբերեն և ռուսերեն լեզուներով տարբերականների միջև: Բացի այդ, հայտում ներառված հայերեն փաստաթղթերում (հավելված 3, կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագիր) կոնսորցիումի մասնակցի անվանման բաղադրիչը նշվել է «ինդիյա» և գիանատող հանձնաժողովի համոզմամբ այն առանց ուղղագրական կամ արտասանական խնդիրների նույն արտասանությամբ կարող է գրվել նաև ռուսերեն, մինչդեռ ներկայացված տեղեկանքում ընկերության անվանումը նշվել է «Инджия» (Ինջիյա): Ընդ որում այդպիսի արտասանության ճիշտ լինելու դեպքում գրառումը հայերենով կատարելը նույնպես հնարավոր էր և խնդիր չեր առաջացնում:

2) Ներկայացվել է «Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք, ըստ որի «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019 թվականի N 3 արձանագրությունը, հանաձայնել է փոփոխել և խմբագրել «Սերբին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ ինջիյա ընկերության միջև 10.02.2019 թվականին կազմված հանձման-ընդունման ակտը՝ «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ ինջիյա ընկերության տնօրեն «Սլոբադան Գոգիկ»-ին փոխարինելով՝ «Սլոբադան Գոգիչ»-ով և ներկայացվել է խմբագրված ակտ: Հատկանշական է, որ ըստ տեղեկանքի՝ հիմքում ունենալով ընթացակարգի հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունների արձանագրությունը, շտկվել է միայն ընկերության տնօրենի անունը, ազգանունը և չի շտկվել ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ»-ը («Гогики-ը), թեև առկա էր դրա շտկման իրական հնարավորություն՝ հաշվի առնելով ընկերության տնօրենի ազգանվան փոփոխությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտել է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով

հրավեր 8.18-րդ կետի 2-րդ ենթակետը ու Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյանի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ին:

Բողոքաբերի կողմից Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված ООО «Сербин» ընկերության 24.09.2019թ.-ի թիվ 1/24 տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что “МНГ Пластик-Гогик Д.О.О. Инджия” надлежащим образом и в сроки выполнила договорные обязательства по договору N 3 от 28.12.2018г. и по акту приема и сдачи для предоставленных товаров от 10.02.2019г. по договору N 3 от 28.12.2018г.. В дополнение указывается, что в вышеизложенных документах есть несоответствия в правописании и произношении букв, возникшие в результате перевода с сербского языка на русский. Принимая во внимание вышеуказанное и протокол 3 от 20.09.2019г., предоставленный членами тендерной комиссии Мэрии г. Ереван (код тендерной процедуры ԵՔ--ՀԲՄԱՊՁԲ-19/1), ООО «Сербин», как покупатель-партнер дает свое согласие в акте приема-сдачи от 10.02.2019 г., поменять фамилия-имя директора компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» на Слободан Гогич, вместо Слободан Гогик, а также добавить в указанном документе ИНН обеих сторон. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификаты (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:*

«Էմէնջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյանի կողմից 24.09.2019թ.-ին Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տրված տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что в полученных и предоставленных сертификатах ISO и TUV Rheinland выражение «Kralja Petra 1 bb 22320 Indjja Serbia» является юридическим адресом компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». В дополнении сообщаем, что в тендерных документах указанные с вашей стороны несоответствия в правописании и произношении букв, возникли в результате перевода с сербского и русского языка на армянский. Исходя из вышеизложенного, сообщаем, что «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». “MNG PLASTIK-GOGIC DOO INDJIJA” и «Էմէնջի Փլաստիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա являются наименованием одной и той же*

компании, что подтверждается налоговым кодом 101612478. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификатаы (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 16.10.2019թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ (02.05.2019թ.-ի N 516-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 43-րդ կետի 3-րդ 4-րդ ենթակետերի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը …

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4) էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է սույն կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով սահմանված ժամկետներում: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների

նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընդ որում, հայտը գնահատվում է բավարար, եթե ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

Այն դեպքում, երբ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատաս-

խանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝

ա. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը,

բ. «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ապա արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացվելու, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից կենցաղային թափոնների կոնտեյներների ձեռքբերման նպատակով 22.08.2019թ.-ին հայտարարված թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն և «Էմէնջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա կազմակերպությունը (համատեղ գործունեության պայմանագիր) Հանձնաժողովի

06.09.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության հիման վրա ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը, ղեկավարվելով կարգի 47-րդ կետի դրույթներով, առաջարկել է հանձնաժողովի քարտուղարին նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել մասնակցի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 03.10.2019թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի կողմից տրամադրված փաստաթղթերը, արձանագրել է հետևյալը.

1) «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» («Էմէնջի Փլասթիք-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա) ընկերության տնօրենի կողմից ներկայացվել է տեղեկանք. որով մեկնաբանվել է, որ անհամապատասխանությունը կապված է ռուսերենից և սերբերենից հայերեն թարգմանության հետ: Սակայն անհամապատասխանություններ առկա են նաև ընկերության անվանման՝ անգլերեն, սերբերեն և ռուսերեն լեզուներով տարբերականների միջև: Բացի այդ, հայտում ներառված հայերեն փաստաթղթերում (հավելված 3, կոնսորցիումի ձևավորման վերաբերյալ պայմանագիր) կոնսորցիումի մասնակցի անվանման բաղադրիչը նշվել է «ինդիյա» և գնահատող հանձնաժողովի համոզմամբ այն առանց ուղղագրական կամ արտասանական խնդիրների նույն արտասանությամբ կարող է գրվել նաև ռուսերեն, մինչդեռ ներկայացված տեղեկանքում ընկերության անվանումը նշվել է «Инджия» (Ինջիյա): Ընդ որում այդպիսի արտասանության ճիշտ լինելու դեպքում գրառումը հայերենով կատարելը նույնպես հնարավոր էր և խնդիր չէր առաջացնում:

2) Ներկայացվել է «Սերբին» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք, ըստ որի «Սերբին» ՍՊԸ-ն, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.09.2019 թվականի N 3 արձանագրությունը, հանձայնել է փոփոխել և խմբագրել «Սերբին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլասթիք-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության միջև 10.02.2019 թվականին կազմված հանձման-ընդունման ակտը՝ «Էմէնջի Փլասթիք-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա ընկերության տնօրեն «Սլոբադան Գոգիկ»-ին փոխարինելով՝ «Սլոբադան Գոգիչ»-ով և ներկայացվել է խմբագրված ակտ: Հատկանշական է, որ ըստ տեղեկանքի՝ հիմքում ունենալով ընթացակարգի հանձնաժողովի կողմից մատնանշված անհամապատասխանությունների արձանագրությունը, շտկվել է միայն

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և չի շտկվել ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ»-ը («Гогик-ը), թեև առկա էր դրա շտկման իրական հնարավորություն՝ հաշվի առնելով ընկերության տնօրենի ազգանվան փոփոխությունը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտել է, որ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել և հիմք ընդունելով հրավեր 8.18-րդ կետի 2-րդ ենթակետը ու Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշել է մերժել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ի և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյանի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏԱՐ ԷԿՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին և «Կոնտեյներ Պոլսկա» ՍՊԸ-ին:

Բողոքաբերը «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշել է, որ «Էմէնջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա կազմակերպությունը հանդիսանում է Սերբիայի Հանրապետության ռեզիդենտ և վերջինս հարկ վճարողի հաշվեհամարն է՝ 101612478:

Բողոքաբերի կողմից Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված ООО «Сербин» ընկերության 24.09.2019թ.-ի թիվ 1/24 տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что “МНГ Пластик-Гогик Д.О.О. Инджия” надлежащим образом и в сроки выполнила договорные обязательства по договору N 3 от 28.12.2018г. и по акту приема и сдачи для предоставленных товаров от 10.02.2019г. по договору N 3 от 28.12.2018г.. В дополнение указывается, что в вышеизложенных документах есть несоответствия в правописании и произношении букв, возникшие в результате перевода с сербского языка на русский. Принимая во внимание вышеуказанное и протокол 3 от 20.09.2019г., предоставленный членами тендерной комиссии Мэрии г. Ереван (код тендерной процедуры ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1), ООО «Сербин», как покупатель-партнер дает свое согласие в акте приема-сдачи от 10.02.2019 г., поменять фамилия-имя директора компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия» на Слободан Гогич, вместо Слободан Гогик, а также добавить в указанном документе ИНН обеих сторон. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификаты (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:*

«Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյանի կողմից 24.09.2019թ.-ին Պատվիրատուի «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին տրված տեղեկանքի համաձայն՝ *«Данная справка выдается о том, что в полученных и предоставленных сертификатах ISO и TUV Rheinland выражение «Kralja Petra 1 bb 22320 Indjja Serbia» является юридическим адресом компании «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». В дополнении сообщаем, что в тендерных документах указанные с вашей стороны несоответствия в правописании и произношении букв, возникли в результате перевода с сербского и русского языка на армянский. Исходя из вышеизложенного, сообщаем, что «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия». "MNG PLASTIK-GOGIC DOO INDJIJA" и «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիյա являются наименованием одной и той же компании, что подтверждается налоговым кодом 101612478. Одновременно хотим заверить, что все предоставленные сертификатаы (ISO, TUV Rheinland) со стороны «МНГ Пластик-Гогик Д.0.0 Инджия», соответствуют действительности, а товар соответствует всем международным стандартам и критериям.»:*

ՀՀ հարկային օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ հարկային մարմնում հաշվառվող հարկ վճարողին տրամադրվում է հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ), որը հանդիսանում է նրա նույնականացման կոդը: ՀՎՀՀ-ն միակն է և ենթակա չէ փոփոխման: ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության լույսի ներքո, վերջինիս սույն գործի փաստերի հետ համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարության մեջ նշված «Էմէնջի Փլասթիք Գոգիչ» ԴՕՕ ինդիյա կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև գործում առկա «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ուղղված ՕՕՕ «Сербин» ընկերության 24.09.2019թ.-ի թիվ 1/24 և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերության կողմից 24.09.2019թ.-ին Հանձնաժողովին տրված տեղեկանքները, փաստում է, որ «МНГ Пластик-Гогик Д.0.0 Инджия», ինչպես նաև «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ ինջիյա անվանումները վերաբերում են ընթացակարգին դիմում ներկայացրած «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությանը, քանի որ, ինչպես վերը նշվեց, հարկ վճարողի հաշվառման համարը

հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովի կողմից գործի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չտրամադրվեց Բողոքաբերին ուղարկված՝ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցման օրինակը, որը հնարավորություն չի տալիս գնահատել և արձանագրել հանձնաժողովի կողմից արձանագրված, սակայն Բողոքաբերի կողմից անհամապատասխանությունները թերի շտկելու՝ ընկերության անվանման բաղադրիչ «Գոգիկ» անվանումը «Գոգիչ» անվամբ չշտկելու հանգամանքը: Այն դեպքում, երբ «Սրեբին» ընկերության կողմից տրամադրված տեղեկանքով կշտկվեր նաև ընկերության անվանման բաղադրիչում տեղ գտած վրիպակը: Ընդ որում, դրա իրական հնարավորությունը Բողոքաբերը ունեցել է, ինչպես և արձանագրել է Հանձնաժողովը: Հատկապես այն դեպքում, երբ թե ընկերության բաղադրիչ հանդիսացող անվանումը և թե ընկերության տնօրենի ազգանունը նույնանում են:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «МНГ Пластик-Гогик Д.О.О Инджия», ինչպես նաև «Էմէնջի Փլաստիգ-Գոգիկ» ԴՕՕ Ինջիյա անվանումները վերաբերում են ընթացակարգին դիմում ներկայացրած «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությանը, քանի որ հարկ վճարողի հաշվառման համարը հանդիսանում է ընկերության նույնականացման կոդը, այն միակն է և ենթակա չէ փոփոխման, ինչպես նաև ՀՎՀՀ-ն չի կարող տրամադրվել այլ հարկ վճարողի:

Ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ Բողոքաբերի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի կողմից 16.10.2019թ.-ի ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/74 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել 03.10.2019թ.-ի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշումները:

2. կայացնել «Հարությունյան Շին» ՍՊԸ-ին և «Էմէնջի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ ինդիյա ընկերությանը (համատեղ գործունեության պայմանագիր) հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**